«ՏԷՐՈՒԹԻՒՆԸ» ՈՐՊԵՍ ՎԱՍԱԼԱՍՏԻՃԵՐԵՆԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՐՏԱՅՈՂ ՏԵՐՄԻՆ

(IX դար—X դարի առաջին երեսնամյակ)

Ռ. Ի. ՄԱՔԵՎՈՍՅԱՆ

«Տէրութիւն». IX դարից սկսած աղբյուրները այդպես են անվանում հայրենատեր ֆեոդալների սեփական տիրույթները։ Այդ տիպի ժառանգական հողատիրությունը ծագել էր նախարարական սիստեմի քայքայման հետևանքով, որի շնորհիվ նախարարական, տոհմային հողատիրությունը փոխարինվել էր անհատ ֆեոդալների (նախկին սեպուհների) սեփականատիրական հողատիրությամբ[1]։ Տոհմերի ներսում առաջացել էին նոր ճյուղեր (կրտսեր տներ), որոնք ներկայացնում էին առանձին ֆեոդալական կազմավորումներ։

IX դարում Բագրատունյաց տոհմի ներսում կային երկու գլխավոր ճյուղեր՝ Տարոնի (Հայաստանի հարավում) և Սմբատ սպարապետի հիմնած (երկրի կենտրոնական և հյուսիսային մասում), հետագայում նրանց թիվը ավելացավ։ Արծրունյաց տոհմը IX դարում ուներ 16 ճյուղ, մի քանի ինքնուրույն ճյուղեր նույն շրջանում կային նաև Սյունիքում[2]։ Ահա այդ առանձին ֆեոդալական տներին պատկանող հայրենատեր հողատերերի սեփական տիրույթները X—XIII դդ. մատենագիրները անվանում են «հայրենի տէրութիւն»։

«Տէրութիւն» կոչվել են նաև առանձին խոշոր պետություններ, օրինակ՝ Արաբական խալիֆայությունը, Բյուզանդական կայսրությունը, նաև Հայաստանը[3]։

Բայց այդ տերմինը ունեցել է ևս մեկ իմաստ, որի վրա մինչ այժմ ուշադրություն չի դարձվել։ X—XIII դդ. հայ պատմիչները «տէրութիւն» բառով արտահայտել են վասալայուզերենական հարաբերությունները գերագույն սյուզերենի (թագավորի կամ դահիրեց իշխանի) և նրա վասալ իշխանների միջև։ IX դարի սկզբից սկսած այդ կապերի ամբողջությունը, վասալիտետը որպես ինստիտուտ, երևան է գալիս պատմիչների երկերում «տէրութիւն» արտահայտությամբ։ IX դարում առաջին, միաժամանակ նաև ամենակարևոր վկայություններից մեկը, որի շնորհիվ հնարավոր է պարզել «տէրութեան» դասային ու վարչաքաղաքական կառուցվածքը, պարունակում է Թովմա Արծրունու աշխատությունը, այդ պատճառով մեզ զբաղեցնող հարցի քննությունը սկսում ենք Վասպուրականի «տէրութիւնից»։

849 թ. Հայաստանի ոստիկան Աբուսեթը վերակացությունը հանձնարարել էր Արզնի և Ներքին Միջագետքի ամիրա Մուսեին[4], որը մտնելով Տարոն, փորձում էր գերել Հայոց իշխան Բագարատ Բագրատունուն։ Բագարատը օգնության համար դիմել էր իշխան Աշոտ Արծրունուն, որի հետ կապված էր ազգակցությամբ, ինչպես նաև «ուխտով»։ Ստանալով լուրը, Աշոտը արագապես «համագունդ ժողով առնէր ամենայն աշխարհին և ամենայն նախարարօք Վասպուրական տէրութեանն։ Փութանակի և վաղվաղակի իւրաքանչիւր զօրօք անդր հասանէին՝ իշխան Աշոտ և եղբարք իւր Գուրգէն և Գրիգոր զօրօք իւրեանց, և ի տոհմէն Արծրունեաց՝ Վահան և Վասակ և Մուշեղ և Ապուպէլճ և Գուրգէն և Վասակ և Ապուչափր և Մուշեղ և Ապումայեայ և Վասակ և Վահան և Համազասպ և Վասակ որդի Գրիգորի և Ապումկդէմ և Մեհուժան և Գրիգոր, սորա ամենեքին արք ժզ ի տանէն Արծրունեաց զօրօքն իւրեանց. և ի տանէն Բագրատունեաց Թոռնկայ որդի զօրօք իւրովք. ի տոհմէն Ամատունեաց Շապուհ ը հարազատօք և զօրօք իւրեանց. ի տոհմէն Գնունեաց Գրիգոր որդի Հազրի ղ այլ ևս հարազատօք և զօրօք իւրեանց. ի

---

[1] Հ. Թումանյան. Հայաստանի տնտեսական զարգացման պատմություն. Երևան, 1960, էջ 105։

[2] Հայ ժողովրդի պատմություն. հ. 3, Երևան, 1976, էջ 165—169։

[3] Հովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ պատմութիւն հայոց. Թիֆլիս, 1912, էջ 292։ Թովմայի վարդապետի Արծրունւոյ պատմութիւն տանն Արծրունեաց. ՍՊԲ, 1887, 123, 124, 126։ Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան պատմութիւն տիեզերական. ՍՊԲ, 1885, էջ 164։

[4] Թովմա Արծրունի, էջ 107—108։

տոհմէն Ընտրունեաց Արտաւազդ է հարազատօք և զօրօք իւբեանց. և այլք ի նախարարացն Վասպուրական իշխանին, Սմբատ Ապահունի, Գրիգոր Քաջբերունի, Վահան Հաւնունի, սեպուհն Դաւիթ, Գազրիկն Ապուհարազ, Թողորոս Վարազխ, Խոսրով Վահնունի, Խոսրով Ակէացի, Վարդան Գաբայեղէն, Սմբատ Մարացեան, սեպուհ մի Սահակ. Պատրիկն Անձևացի, Գորգ Հարմացի, Դաւիթ Գունդսաղար. և այլ բազումք յազատ տանէ, իւրաքանչիւր զօրօք գումարեալ. ի մի վայր խաղացեալ՝ գնացին հասին յայն վայր...»[5]։

Այս հաղորդումը մեծ արժեք է ներկայացնում Վասպուրականի «տէրութեան» ներքին հիերարխիկ կազմը պարզելու համար։ Ինչպես երևում է պատմիչի հաղորդումից, նրանում կարելի է առանձնացնել երկու հիմնական խումբ։ Առաջինը Արծրունի իշխան Աշոտի եղբայրները և Արծրունյաց տան 16 այլ ներկայացուցիչներն էին։ Նրանց հետ միասին Վասպուրականի ավելի փոքր տների նահապետները (գահերեցներ)[6], օրինակ՝ Ամատունիներ, Տրունիներ, Գնունիներ, Թոռնիկյանների կրտսեր ճյուղը։ Այդ խմբի ներկայացուցիչները համարվում էին Վասպուրականի «տէրութեան» և Վասպուրականի իշխանի «նախարարներ»։

Մյուս խումբը կազմում էին ազատները՝ «յազատ տանէ» և բացի այդ կային առանձին «սեպուհներ», որոնք նույնպես ունեին իրենց զորամասերը։ Այլ առիթով պատմիչը նորից հիշատակում է Վասպուրականի նախարարներին։ Բուղայի արշավանքի ժամանակ Աշոտ Արծրունին ասրացել էր Նկան բերդում, որտեղ «ընդ նմա էին գունդք ազատաց և նոցին զօրաց ըստ տոհմս ազգաց, ի բնիկ նախարարացն Վասպուրական տէրութեանս»[7]։ Այդ վկայությունից երևում է, որ Վասպուրականում կային «բնիկ նախարարներ», որոնք իրենց ազատներին տրամադրել էին Աշոտին։ Ի վերջո Աշոտը ստիպված է եղել հանձնվել Բուղային. նա և «այլք նախարարք ի տանէն Արծրունեաց» աքսորվեցին Սամառա։ Դրանց թվում էին Աշոտ իշխանը իր ընտանիքով, որդին՝ Գրիգորը, Վահան Արծրունին և նրա որդի Գագիկը (Ապումրվան), եղբայրը՝ Մուշեղը, ինչպես նաև «զայլս ազատաստանէ»[8]։

Վերը մեջբերված երկու վկայություններից երևում է, որ Վասպուրականի «տէրութիւնը» կազմված էր «նախարարներից» (այդպես է անվանում պատմիչը իշխաններին) և ազատաներից։ «Տէրութիւնը» գլխավորում էր Աշոտ Արծրունին, որը լինելով Արծրունյաց մեծ իշխան (գահերեց)[9], մյուս ֆեոդալների կողմից ճանաչված էր ամբողջ Վասպուրականի իշխան[10]։ Աշոտը միաժամանակ համարվում էր Վասպուրականի «նախարարների» «տէրը»։ Թովման գրում է, որ Աշոտի նախարարներից Վահան Ամատունին եկել էր Նկան բերդը, «ուր տէրն իւրեանց կար»[11]։

Վասպուրականի «տէրութիւնը» Թովման հիշատակում է նաև Աշոտ իշխանի հաջորդների՝ Գրիգոր-Դերենիկի, նրա որդի Աշոտի և վերջինիս եղբայր Գագիկի (908-ից՝ Վասպուրականի թագավոր) օրոք[12]։

Գագիկի մասին պատմիչը գրում է, որ նա աստիճանաբար զորեղանում է և «...զամենայն դրացիս և որք շուրջ զկողմամբ իւրով էին տէրութեանն նուաճեալ ընդ իշխանասաստ հրամա-

---

5 Նույն տեղում, էջ 109։

6 Հմմտ., օրինակ, Շապուհ՝ նահապետ Ամատունիների (Թովմա Արծրունի, էջ 199)։

7 Նույն տեղում, էջ 133։

8 Նույն տեղում, էջ 139, 151։

9 Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 119։ Թովմա Արծրունի, էջ 109։

10 Թովմա Արծրունի, էջ 109, 111, 116, 125, 139։

11 Նույն տեղում, էջ 131։

12 Թովմա Արծրունին Դերենիկի մասին գրում է, որ նա «էր ամաց իբրև տասանց յորժամ նստաւ յաթոռ տէրութեան հօր իւրոյ» (էջ 202)։ Նրա որդի Աշոտի հետ գահերեցության համար մրցակցում էր Արծրունյաց այլ ճյուղից Գագիկ Ապումրվանը, որին կարճ ժամանակով հաջողվում է հասնել նպատակին. Սմբատ I Բագրատունու եղբայր Շապուհը «...կացուցանէ զԳագիկ՝ իշխան Վասպուրական տէրութեանն...» (Թովմա Արծրունի, էջ 235։ Հմմտ. Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 173, 190)։ Աշոտի մահից հետո «առնու զիշխանութիւնն Վասպուրական տէրութեանս Գագիկ եղբայր նորին» (Թովմա Արծրունի, էջ 251)։ Պատմիչը գրում է նաև, որ Գագիկ և Գուրգեն եղբայրները «զրոլոր երկիրս իւրեանց տէրութեանն բաժանեցին» (Նույն տեղում, էջ 251։ Հմմտ. Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 210)։

նաւ՝ ի ծառայութիւն գրաւէ իւրոյն տէրութեանն»[13]։ Պատմիչի այս վկայություններից երևում է, որ «տէրութիւնը» կապված էր վասալական ծառայության հետ։ Շատ բնորոշ է Մոկաց և Անձևացյաց իշխանների օրինակը։ Ժամանակին այդ երկուսին ենթարկել էր Աշոտ իշխանը (Դերենիկի որդին)[14]։ Դագիկի օրոք Մոկաց իշխանները փորձում են ազատվել կախումից, չեն վճարում հարկը և անտեսում են Դագիկի սպառնալիքները, այդ պատճառով վերջինս ասպատակում է Մոկաց երկիրը[15]։

Թովմա Արծրունին հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում «տէրութեան» վարչական ապարատի մասին։ Պատմիչը գրում է, որ Աշոտ իշխանի եղբայր Գուրգենը 7 տարի Արարիայում գերության մեջ լինելուց հետո վերադարձավ Վասպուրական և ցանկացավ «միապետել զիշխանութիւն տէրութեանն և յարդարել կարգել յօրինել զկարգս շփոթեալ ավերեալ երկրիս»[16]։ Ուրեմն «տէրությունը» ունեցել է նաև իշխանություն։ Պատմության այլ հատվածներում հանդիպող հակիրճ տեղեկություններից կարելի է պատկերացնել այդ իշխանության էությունը։

Նույն Գուրգենը Աշոտի գերությունից հետո խնդրում է Բուղային «տացէ ի ձեռս նորա զիշխանութիւնն Վասպուրականի փոխանակ եղբօր իւրոյ», իսկ Բուղան խոստանում է կատարել խնդիրը, եթե Գուրգենը ներկայանա իրեն[17]։ Վերջինիս իշխան հաստատվելուց հետո պաշտոնապես հայտարարվում է, որ «առաւ իշխանութիւնն Վասպուրականի աշխարհին ի ձեռս Գուրգէնի, փոխանակ եղբօր իւրոյ Աշոտոյ տիրել ընդ նոսա»[18]։ Բայց Գուրգենը ինքը խաբեությամբ աքսորվում է Սամառա[19]։ «Յետ բառնալոյ իշխանութեանն ի Վասպուրական երկրէն,— շարունակում է պատմիչը,— մնացին տոհմք Արծրունեաց ըստ աղգս ազգս՝ քաջն Գուրգէն (Ապուսելճ— Ռ. Մ.), և Մուշեղ եղբայր իւր և Ապուչափր... և Վասակ... և այլք ի տանէն Արծրունեաց և աղատք նոցա»[20]։ Եվ նրանք «կոիւս դնէին յաղագս իշխանութեանն ցանկութեան»։ Մի մասը ցանկանում էր Գուրգեն Ապուսելճին. «զԳուրգէն յառաջ ածեն ի պատիւ իշխանութեանն», մյուսները՝ Ապուչափրին կամ Վասակին[21]։ Սկզբնապես հաղթում է Ապուչափրը, նրա կողմնակիցները «առաջնորդ կացուցանէին իւրեանց զԱպուչափր Արծրունի»[22]։ Այնուհետև Վասակ Կովակերին հաջողվում է դառնալ իշխան, բայց կարճ ժամանակից նրան գերում է Գուրգեն Ապուսելը և «յինքն գրաւեաց զղօրաւորութիւն բոլոր Վասպուրական տէրութեանս»[23]։ Դրանից հետո նրա իրավունքը ճանաչում է նաև Բուղան և նրան հանձնում «զգլխապետութեան սուսերս իշխանական» և «կացոյց զնա իշխան յիւրում հաւատարիմ տեղւոջ»[24]։

Իշխանության մասին խոսելիս պատմիչը երբեմն այն անվանում է «իշխանական պետութիւն»։ Աշոտ Արծրունու (Դերենիկի հոր) մասին նա գրում է. «Ի սորա ժամանակս (Ջաֆր խալիֆի) տիրէր Վասպուրական աշխարհիս Աշոտ ի տանէն Արծրունեաց... և անուանի եղեալ քան որ յառաջադոյն... մանաւանդ որ ի Վասպուրական աշխարհիս էին կացեալ նախարարք յիշխանական պետութիւնս»[25]։ Այդպիսի «իշխանական պետութիւն» ունեին նաև Վասպուրականի մյուս դահերից իշխանները[26]։ «Իշխանական պետութիւն» նշանակում է զերագույն սյուզերենի

---

13 Թովմա Արծրունի, էջ 279։

14 Սմբատ I Բագրատունու և Ապահունիքի կայսիկների կռիվներին մասնակցում էին նաև Մոկաց և Անձևացյաց իշխանները Աշոտ Արծրունու գլխավորությամբ, «վասն զի իշխանն Մոկաց և իշխանն Անձևացեաց նուաճեալ էին ընդ ձեռամբ Վասպուրական իշխանութեանն» (Թովմա Արծրունի, էջ 245—246)։

15 Թովմա Արծրունի, էջ 279—280։

16 Նույն տեղում, էջ 202։

17 Նույն տեղում, էջ 143—144։

18 Նույն տեղում, էջ 150։

19 Նույն տեղում, էջ 151։

20 Նույն տեղում, էջ 191։

21 Նույն տեղում, էջ 192։

22 Նույն տեղում, էջ 195։

23 Նույն տեղում, էջ 196։

24 Նույն տեղում, էջ 198։

25 Նույն տեղում, էջ 107։

26 Աշոտի մահից հետո «պայազատէր զիշխանական պետութիւնն զայն Գրիգոր որդի նորա ընդ նորա, որ Դերենիկն անուանիւր» (տե՛ս Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 135)։

վարչաքաղաքական իրավունքները տվյալ երկրում[27]։ Օրինակ. Թովմա Արծրունին գրում է, որ 862 թ. գերված հայ իշխանները վերադառնում են Սամառայից «յիւրաքանչիւր ընիկ տէրութիւնս... և հնազանդեալք ընդ պետութեամբ իշխանաց իշխանի»[28]։ Այս հատվածում խոսքը Աշոտ Բագրատունի իշխանաց իշխանի «պետության» մասին է. 862 թ. խալիֆը Աշոտին նշանակեց Արմինիայի կառավարիչ՝ հանձնելով նրան արաբ ոստիկանի ֆունկցիաները։

Թովմայի այս տեղեկություններում «իշխանությունը» կամ «իշխանական պետությունը» ներկայանում է որպես «պատիւ», որի հետ կապվում է զորավարությունը, գլխապետությունը, առաջնորդությունը։

Զորավարություն=զորավար լինել, ունենալ իշխանություն և առաջնորդություն[29]։ Զորավարին կարելի է նույնացնել ռազմավարչական պաշտոնյաների հետ, որոնք միաժամանակ ունեին և՛ վարչական (քաղաքացիական), և՛ զինվորական իշխանություն։

«Իշխանական պետությունը» ուներ իր վարչական ապարատը։ Թովմայի մոտ կան որոշ տեղեկություններ նրա մասին։ Նկան բերդում Աշոտի ամրանալու կապակցությամբ Թովման գրում է. «Իսկ իշխանն Աշոտ, առ սակաւ սակաւ ամփոփեալ ընտանեօք իւրովք, և ընդ նմա ոմանք յազատաց իւրոց, Մուշեղ Վահևունի, որ զտանուտրական պատիւն ուսէր, և Վահրամ սեպուհ Քիկնապահ իշխանին և Վահրամ Տրունի և Հասան և այլք ի սեպուհ պաշտօնէից՝ և եկին մտին ի բերդն Դղեակ, յամրոցն Նկան, որ ի Թոռնավան գաւառի»[30]։ Բայց երբ պաշարումը երկարում է և գրությունը ծանրանում, ազատներից ոմանք գաղտնի որոշում են համաձայնության գալ Բուղայի հետ։ Նրանք նամակ են գրում Բուղային, որտեղ մասնավորապես նշում են. «Եւ արդ, մեք, նահապետք ազատաց Վասպուրական իշխանիս՝ Մուշեղ ի ցեղէ Վահևունեաց, Վահրամ յազգէ Տրունեաց, Վահրամ միւս, որ և Քիկնապահ իշխանիս, և այլ գունդք ազատաց և զօրական պետութեանց, ի ձեռս մեր է հոգաբարձութիւն աշխարհիս»[31]։ Այս տեղեկությունից երևում է, որ Աշոտի ազատներին հանձնարարված էր Վասպուրականի հոգաբարձությունը. նրանք համարվում էին «զորական պետության» և «սեպուհ պաշտոնեից»։ Նշված զորականները և սեպուհները հանդիսանում էին «պետության»՝ վարչական մեխանիզմի սպասավոր-պաշտոնյաներ («սեպուհ պաշտոնեից» ըստ Թովմայի). նրանց տրված էին հոգաբարձության, այն է՝ վերակացության տարբեր ծառայությունները (տանուտերություն և այլն)։ Նրանք նշանակվում էին ազատների «նահապետներից» և կոչվում էին «գունդք ազատաց»։ «Գունդ» նշանակում է առանձին խումբ, դաս[32], հենց այդ դասից էին հավաքագրվում «սեպուհ պաշտոնից» կոչվող մարդ գործակալները։

Պաշտոնավարությունը կատարվում էր որպես ծառայություն, Աշոտի և նրա ազատների միջև կար «ուխտ»։ Թովման գրում է, որ դավաճանելով Աշոտին, ազատները խախտեցին «միաբանութեան ուխտը», որը կար նրանց միջև[33]։ Ազատների համար Աշոտը «հայր»[34] էր՝ սյուզերեն[35]։

Աշոտը և Արծրունյաց մյուս մեծ իշխանները Վասպուրականում միաժամանակ և՛ իշխան էին՝ գահերեց իշխան, օժտված վարչաքաղաքական իրավունքներով, և՛ «տէր», գլխավորում էին

---

27 Պետություն—վարչական իշխանություն (տե՛ս Նոր բառգիրք հայկազեան լեզուի. հ. 2, Վենետիկ, 1837, էջ 646)։

28 Թովմա Արծրունի, էջ 207։

29 Նոր բառգիրք հայկազեան լեզուի. հ. 1, Վենետիկ, 1836, էջ 156։ Գլխապետություն նշանակում է զորապետություն, ազգապետություն, տանուտերություն (նույն տեղում, էջ 560)։

30 Թովմա Արծրունի, էջ 131։

31 Նույն տեղում, էջ 134։ Մուշեղ Վահևունուց հետո տանուտեր էր Ռոստոմ Վարաժնունին (նույն տեղում, էջ 214)։

32 Նոր բառգիրք. հ. 1, էջ 581։

33 Թովմա Արծրունի, էջ 133։

34 Աշոտը ազատներին պարսավելով ասում է. «Ապա թէ իրրև զհայր գրգեալ և գգուեալ էի զձեզ...» (Թովմա Արծրունի, էջ 136)։

35 Բագրատունյաց Հայաստանում (ինչպես և այլ երկրներում) սյուզերենին և վասալին անվանում էին «հայր» և «որդի», որոնք կապված էին «դաշինքով» (տե՛ս ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հաս. գիտ.», 1977, № 10, էջ 46—54)։

թե՛ «տէրութիւնը» և թե՛ «իշխանութիւնը»[36]։ Վասպուրականի մյուս խոշոր ֆեոդալների՝ «նախարարների» համար նրանք «առաջինն էին հավասարների մեջ»։

Սյունյաց «տէրութիւն»։ IX դարի սկզբին հին նախարարության քայքայումով Սյունիքում նույնպես գոյացել էր նոր որակ, նախարարական հողերը բաժանվել էին տոհմի անդամների միջև, որոնք դարձել էին ինքնուրույն իշխաններ։ Սյունիքում նրանք կոչվում էին գահակալ իշխաններ[37]։ IX—X դդ. Սյունիքում կային մի քանի գահակալ իշխանություններ. նրանց միջև տեղի էր ունենում մրցակցություն առաջնության և գերիշխանության համար, որի ընթացքում ավելի ազդեցիկը վասալական հպատակությամբ իրեն էր ենթարկում մյուսներին։

IX դարի սկզբին ամենաազդեցիկը «Սիւնեաց նահապետ» Վասակն էր։ Նրա մասին Օրբելյանը գրում է. «Իսկ դարձեալ եղեն գահակալ իշխանք Սիւնի, առաջին՝ Վասակ որ էր մեծ նահապետ Սիւնեաց»։ Միաժամանակ Վասակը ճանաչված էր «Սիւնեաց տէր և իշխանաց իշխեցող»[38]։ Այդ առթիվ Հ. Ութմաղյանը ճիշտ նկատում է, որ Վասակը նահապետ չէր բառի հին իմաստով (նախարար), այլ մյուսների նկատմամբ գերիշխող, սյուզերեն դիրք ունեցող[39]։

821 թ. Վասակի մահից հետո նրա որդիները՝ Փիլիպպեն և Սահակը բաժանում են հոր տիրապետությունը. առաջինը դառնում է «գահերէց իշխան Սիւնեաց» և ժառանգում տիրույթների մեծ մասը Վայոց ձոր կենտրոնով, իսկ կրտսերին բաժին է հասնում Գեղարքունիքը[40], ուր առաջանում է ինքնուրույն գահակալ իշխանություն։ Այսպիսով, Սյունյաց «իշխանաց իշխեցողի» տիրապետությունը տրոհվում է թե՛ տարածքի և թե՛ քաղաքական իմաստով։ Փիլիպպեի հիմնած Վայոց ձորի ճյուղը այնուհետև հանդես է գալիս որպես գահերեց[41]։

Տրոհման պրոցեսի հետևանքով մինչև IX դարի վերջը Սյունիքում առաջացել էին հինգ գահակալական ճյուղեր։ Դրանք էին. Վայոց ձորի ճյուղը (նրան պատկանում էր Սյունիքի մեծ մասը՝ Վայոց ձոր, Բաղք, Սղուկ, Ճահուկ, Հաբանդ), Գեղարքունիքի ճյուղը, Գրիգորի ճյուղը (Սյունիքի հարավում), Սահակյանների և Զաքիկյանների ճյուղերը[42]։

Այսպիսով, IX դարի սկզբից Սյունիքը (ինչպես և Վասպուրականը—Ռ. Մ.) ոչ թե նախարարական, այլ մասնատված իշխանական երկիր էր[43]։ Այդպիսի պայմաններում Վայոց ձորի գահերեցների «իշխանական գահը» Սյունիքում համարվում էր «բուն գահ իշխանացն Սիւնեաց»[44]։ IX դարի վերջում—X դարի առաջին կեսին Վայոց ձորի իշխանությունը գլխավորել են Փիլիպպեի որդի Աշոտը և նրա որդի Սմբատը։ Այս երկուսին պատմիչը անվանում է գահերեց իշխաններ[45], բայց միաժամանակ և «մեծ իշխանք գահագլուխք Սիւնեաց տէրութեան Աշոտ և որդի իւր՝ Սմբատ», «գահագլուխ իշխան Սիւնեաց և տէր ի վերայ ամենայն Սիսական աշխարհին»[46]։

---

36 Գրիգոր-Դերենիկի սպանությունից հետո Գագիկ Ապումբրվանը դարձավ «իշխան և տէր իշխանաց (իշխանների—Ռ. Մ.) ի աշխարհին Վասպուրականի»։ Սմբատ I հայոց թագավորը հրամայեց նրա փոխարեն «կացուցանել տէր ի տանն Վասպուրականի» Գագիկ Արծրունուն (Գրիգոր-Դերենիկի որդուն), որը միաժամանակ և Վասպուրականի իշխանն էր (տե՛ս Պատմութիւն Անանուն գրուցագրի, կարծեցեալ Շապուհ Բագրատունի. թարգմանությունը գրաբարից, առաջաբանն ու ծանոթագրությունները Մ. Դարբինյան-Մելիքյանի. Երևան, 1971, էջ 169, 173, 175, 177)։ Գրիգոր-Դերենիկը «տէր» և իշխան (Թովմա Արծրունի, էջ 202)։

37 Հ. Ութմաղյան. Սյունիքը IX—X դարերում. Երևան, 1958, էջ 28—30։

38 Պատմութիւն նահանգին Սիսական, արարեալ Ստեփաննոսի Օրբելեան արքեպիսկոպոսի Սիւնեաց. Թիֆլիս, 1910, էջ 158, 296։

39 Հ. Ութմաղյան. Նշվ. աշխ., էջ 27—28։

40 Ստ. Օրբելյան, էջ 296—297։

41 Հ. Ութմաղյան. Նշվ. աշխ., էջ 32։

42 Նույն տեղում, էջ 26։ Թ. Հակոբյան. Սյունիքի թագավորություն. Երևան, 1966, էջ 53—56։

43 Հ. Ութմաղյան. Նշվ. աշխ., էջ 26։

44 «Բուն գահ իշխանացն Սիւնեաց էր Բաղք, Վայոց ձոր և այլ շրջակայքն՝ Վասակայ և Աշոտոյ և որդւոց Աշոտոյ...» (Ստ. Օրբելյան, էջ 176 ,177)։

45 Ստ. Օրբելյան, էջ 185, 199, 229, 231, 235, 237, 247, 252։

46 Նույն տեղում, էջ 183, 185։ Այլ տեղ պատմիչը գրում է. «Ի ժամանակս թագաւորութեանն Հայոց Աբլ-Աբասայ՝ որդւոյ Սմբատայ թագաւորի, և ի տէրութեանն Սիւնեաց Սմբատայ... 378 (929, տե՛ս էջ 258)։

Այս վկայություններից պարզվում է, որ Սյունիքում նույնպես կար «տէրութիւն», որը ունեցել է գահագլուխ իշխաններ. միաժամանակ նրանք Սյունյաց մյուս իշխանների կողմից ճանաչվել են Սյունյաց «տէր և իշխանաց իշխեցողներ»։

Գահագլուխ=գահով գլխավոր, առաջինը, նա առաջինն էր մյուս գահակալների մեջ և որպես այդպիսին գլխավորում էր Սյունյաց «տէրութիւնը», ուներ «իշխանութիւն»։ Պատմիչը գահագլուխ իշխան Սմբատի (Աշոտի որդու) մասին գրում է. «Եղև շինութիւն ս. ուխտին (Վահանավանքի—Ռ. Մ.) յ360 թուականին Հայոց, ի թագաւորութեանն Սմբատայ Բագրատունւոյ, յիշխանութեան Սիւնեաց գահերէց իշխանին Սմբատայ՝ որդւոյ Աշոտայ...»[47]։

Այս տեղեկությունների շնորհիվ կարելի է եզրակացնել, որ Սյունյաց գահերեցը ունեցել է «իշխանութիւն», որը տվյալ դեպքում կարող է լինել գահագլխի «իշխանությունը»։ Ուրեմն, Սյունյաց գերագույն սյուզերենը ունեցել է միաժամանակ և՛ իշխանություն, և՛ «տէրութիւն». նա Սիսական աշխարհի և՛ իշխանն էր, և՛ «տէրը», այսինքն գերագույն կառավարիչը (իշխան) և գերագույն սյուզերենը։ Սա ունեցել է նաև «իշխանական պետութիւն», չնայած Ստեփանոս Օրբելյանը դրա մասին մանրամասներ չի հաղորդում[48]։

Որն էր նրա «իշխանութեան» էությունը։

Սյունյաց գահագլուխը իշխանաց իշխեցող էր, բայց նույն գահագլուխը անվանվում էր նաև իշխանաց իշխան[49]։ Գահագլուխ՝ գահ ունեցողների մեջ առաջինը (primus inter pares) իշխանների մեջ իշխեցող լինելը ցույց է տալիս, որ նա կարգավորում էր վարչաքաղաքական հարաբերությունները ֆեոդալների միջև, իսկ դրա համար անհրաժեշտ էր ունենալ վարչական ապարատ (իշխանական պետություն) «տէրութեան» շրջանակներում։

Հետագայում, երբ Սյունիքում առաջացավ թագավորություն, Վասակ թագավորը (998—1040), որը ժառանգել էր հոր (Սյունյաց թագավոր Սմբատ I-ի) «տէրութիւնը», իր եղբայր Սեվադային նշանակեց «իշխանաց իշխան ազատակոյտ զօրաց իւրոց»[50]։ Նույն Վասակի քույրը ամուսնացած էր Սյունյաց տոհմից Աշոտի հետ, «որ էր իշխանաց իշխան ամենայն թագաւորութեանս»[51]։ Վասակ թագավորը մահացավ անժառանգ և այդ պատճառով թագավորեցրին Աշոտի որդի Սմբատին[52] (Սյունյաց թագավոր Սմբատ II, 1040—1051), իսկ իշխանաց իշխանի պաշտոնում Աշոտին հաջորդեց վերջինիս մյուս որդին՝ Գրիգորը (իշխանաց իշխան Սիսական աշխարհիս»)[53]։

Բերված տվյալներից երևում է, որ Սյունիքում թագավորության կազմավորումից հետո գահագլուխը (թագավորը) իշխանաց իշխանի պարտականությունները հանձնել էր իր մերձավորներին որպես վասալական ծառայություն, իսկ ինքը մնում էր գերագույն կառավարիչ (այդպես էր նաև Բագրատունիների մոտ)։ Սյունիքում իշխանաց իշխանը գլխավորում էր նաև բանակը։

«Բագրատունյաց տէրութիւն»։ Նրա մասին առաջին հակիրճ տեղեկությունը վերաբերում է Սմբատ սպարապետի շրջանին. նշելով վերջինիս մահը, պատմիչ Ստեփանոս Օրբելյանը ավելացնում է. «Եւ պայազատէ զտէրութիւն նորա (Աշոտ), որ և թագաւորեաց իսկ»[54]։ Բագրատունյաց «իշխանութիւնը» նույնպես Սմբատի ձեռքում էր, այդ մասին վկայում է Կիրակոս Գանձակեցին. «Իսկ զկնի մահուան իսոստովանողին Սմբատայ առնու զիշխանութիւնն Աշոտ, որդի

---

47 Նույն տեղում, էջ 240։

48 Հովհաննես Դրասխանակերտցին Գեղարքունիքի իշխան Վասակ Գարուի մասին, որը կարճ ժամանակով դարձավ գահերից, գրում է, որ նա «վարեալ զիշխանական պետութիւն իր» (տե՛ս էջ 135)։

49 Գահերեց իշխան Սմբատի կին Սոֆին 936 թ. կառուցել էր Դնդեվանքը և այդ առթիվ գրել, որ եկեղեցին կառուցված է «...յարեւշատութիւն իշխանաց իշխանին Սմբատայ և որդեկաց մերոց» (Ստ. Օրբելյան, էջ 262)։

50 Նույն տեղում, էջ 301։

51 Նույն տեղում, էջ 318։

52 Նույն տեղում։

53 Նույն տեղում։

54 Նույն տեղում, էջ 172։ Սամուէլի քահ. Անեցւոյ հաւաքմունք ի գրոց պատմագրաց. Վաղարշապատ, 1893, էջ 94։

նորա»[55]։ Այնուհետև Աշոտը «տէրութիւնը» հանձնել է իր որդի Սմբատին։ Արուճի Ս. Գրիգոր տաճարի 867 թ. արձանագրությունում գրված է. «ՅԺԶ (867) թուականին Հայոց յիշխանութեան Աշոտոյ եւ ի տէրութեան Սմբատայ Հայոց սպարապետի Բագրատունոյ եւ ի կաթողիկոսութեան Զաքարիայի եղեւ կոիւ ընդ Արուճ եւ ընդ Կոշ...»[56] (խոսքը Արուճ ն Կոշ գյուղերի միջև եղած վեճի մասին է, որը կարգավորել էր Սմբատի «ծառա» Գրիգորը)։

Սմբատի «տէրութիւնը» վկայված է նաև Լազարյան Ավետարանի հիշատակարանում. «Դրեցաւ ս. եւ կենսարեր ավետարանս այս ՅԼԶ թուականութեան Հայոց (887), ի հայրապետութեանն Գեորգայ Հայոց կաթողիկոսի եւ յիշխանութեանն Աշոտի իշխանաց իշխանի եւ ի տէրութեանն Սմբատայ Բագրատունւոյ»[57]։

Այսպիսով, Բագրատունիները ևս, մյուս տների նման, IX դարում ունեին և «տէրութիւն», և «իշխանութիւն», բայց նրանց մոտ այդ երկու ինստիտուտները գլխավորում էին տարբեր անձնավորություններ։ Ընդ որում, Աշոտի «իշխանութիւնը» 857—862 թթ. ընդունում էին Բագրատունիների անմիջական վասալ իշխանները, իսկ 862—890 թթ. նրանց հետ նաև բոլոր հայ դահիրեց իշխանները[58]։

Բագրատունիների «տէրութիւնը» ավելի հաճախ է հիշատակվում աղբյուրներում հայ պետականության վերականգնման շրջանից, ամենից շատ և կարևոր տեղեկություններ հաղորդում է կաթողիկոս և պատմիչ Հովհաննես Դրասխանակերտցին։ Աշոտ I-ի թագավորության կապակցությամբ նա գրում է. «...պսակեն զնա թագաւոր ի վերայ Ասքանազեան ազգին։ եւ այնուհետ բազում ի երեսելի կարգս յարդարէր աշխարհի տէրութեան իւրոյ, յօրինուածս տանց, ազգաց, բազմաց, շինից, դաստակերտաց...։ եւ այսպէս ի նորոգատուր թագաւորութեանն բարձրացուցանէր զազգս Թորգոմեանս։ Զայսր Բարսեղ I-ը, ճանաչելով նրա թագավորությունը, թագ է ուղարկում նրան «և հաղորդակից կացուցանելով յամենայն թագաւորութիւնս տէրութեան իւրոյ»[59]։ Այս երկու վկայություններից երևում է, որ Աշոտ I-ի օրոք կար «տէրութիւն», որը ընդգրկում էր ամբողջ Հայաստանը (նրա անկախություն ձևոք բերած մասը)։ Այդ «տէրութիւնը» ուներ իր թագավորությունը։

«Տէրութեան» մասին Դրասխանակերտցու երկում ավելի արժեքավոր տեղեկություններ կան Սմբատ I-ի շրջանի վերաբերյալ, ընդ որում այդ տերմինը պատմիչը գործածում է մի քանի իմաստով, որոնք բացատրության կարիք ունեն։ Նախ, Սմբատի «տէրութիւն» ասելով պատմիչը

---

55 Կիրակոս Գանձակեցի. Պատմութիւն Հայոց. Երևան, 1961, էջ 79։

56 Գ. Հովսեփյան. Գրչության արվեստը հին հայոց մեջ. մ. Գ։ Քարտեզ հայ հնագրության. Վաղարշապատ, 1913, էջ 11 (լուսանկարը՝ տախտակ Ժ)։ Կ. Կոստանյանցի «Վիմական տարեգրքում» (ՍՊբ, 1913, էջ 3) արձանագրության տարեթվում Զ-ի փոխարեն տպված է Ը, որը սխալ է։ Արձանագրությունում հիշվող սպարապետ Սմբատը կարող է լինել միայն Աշոտ իշխանաց իշխանի որդի Սմբատը, այլ ոչ նրա հայրը, որը 855 թ. գերված հայ իշխանների հետ մեկնել էր Սամառա և այնտեղ էլ մահացել։ Բայց Աշոտի իշխանաց իշխանության տարիներին Հայոց սպարապետն էր վերջինիս եղբայր Աբասը. պետք է եզրակացնել, որ Աբասից առաջ որոշ ժամանակ սպարապետ էր Աշոտի որդին։ Անունների շփոթությունը բացառվում է, արձանագրությունը ընթերցվում է շատ պարզ, բացի այդ նրանում հիշվող կաթողիկոս Զաքարիան ընտրվել է Սմբատի աթոռվելու նախօրեին և կահակալել 855—876 թթ. (տե՛ս Մ. Օրմանյան. Ազգապատում. հ. 1, Կ. Պոլիս, 1912, էջ 979)։

57 Գ. Հովսեփյան. Յիշատակարանք ձեռագրաց. Անթիլիաս, 1951, էջ 84։ Հիշատակարանում նշված 887 թ. ճիշտ լինել չի կարող, որովհետև այդ թվականին Աշոտը արդեն թագավոր էր։

58 Թովմա Արծրունին Աշոտի վարչական իշխանության մասին գրում է. «Ե ամ յիշխանական ճոխութեան, Իե ամ յիշխանաց իշխանական պետութեանն, Դ ամ ի թագակալ շքեղութեանն» (տե՛ս Թովմա Արծրունի, էջ 229—230)։

59 Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 139, 140։ «Ազգ Թորգոմեան» ասելով՝ պատմիչը նկատի ունի ամբողջ Հայաստանը։ Նույն իմաստն ունի նրա վկայությունը, որ Աշոտը հրամայեց Գևորգ Գառնեցուն ձեռնադրել «յառաջնորդութիւն տանս Թորգոմայ» (էջ 137)։ Տե՛ս նաև Հաւարումն պատմութեան Վարդանայ վարդապետի. Վենետիկ, 1862, էջ 85։

նկատի ունի «Արմինիան»60, իսկ ստորև մեջբերվող երկու օրինակներում՝ ամբողջ Հայաստանը։ Երբ խալիֆն ու Ատրպատականի ամիրա Յուսուֆը Սմբատից պահանջում են տալ «զբանկն արքունի», վերջինս ստիպված է լինում ամբողջ երկրում հարկահավաք կատարել. «Եւ ապա ընդ բոլոր աշխարհս տէրութեան իւրոյ հինգերորդել հրամայէ զամենայն երամակս ձիոց և զանդեայս արջառոց և զհօտս ոչխարաց»61։ Այլ տեղ պատմիչը հաղորդում է, որ Միջագետքի ամիրա Ահմադը 890-ական թթ. վերջում գավթել էր Տարոնն ու Աղձնիքը։ 898 թ. Սմբատը պահանջել էր վերադարձնել այդ մարզերը, «զի մի տարամերժեսցի սեպհականութիւն ազգացն այնոցիկ ի բնիկ տէրութենէ»62։

Սմբատի «տէրութիւն» արտահայտությունը գործածվում է նաև Բագրատունյաց ոստանի իմաստով։ Այսպես, Սմբատի բարձրաստիճան պաշտոնյա Հասան Գնթունին արքունի տան «հրամանատար» էր, միաժամանակ՝ «իշխան և հրամանատար բոլոր տէրութեանն արքայի»63, Պատմիչի խոսքը Բագրատունյաց ոստանում Հասանի պաշտոնեության մասին է։ Բագրատունյաց ոստանին կամ նրա առանձին շրջաններին է վերաբերում նաև «տէրութեան» հիշատակումն այլ տեղերում64։

Դրասխանակերտցին Սմբատի «տէրութիւն» տերմինը օգտագործում է նաև նրա սեփական տիրույթը նշելու համար65։

Վերջապես, «տէրութիւն» տերմինով պատմիչը անվանում է վասալասյուզերենական կապերը որպես գերադասի (սյուզերենի) և վասալ ֆեոդալների միջև հաստատված քաղաքական հարաբերությունների սիստեմ, ինստիտուտ։ Կարելի է բերել մի քանի օրինակներ. Բագրատունյաց ոստանի վարչական միավոր «Ուտի գավառի» (Աղստև գետի միջին հոսանք) կառավարիչ («իշխան») Մովսեսը, ըմբոստանալով Աշոտ II-ի դեմ, գնում է. ծանարների քորեպիսկոպոսի մոտ՝ մտադրվելով ենթարկվել նրա «տէրութեանը»66 (ընդունել նրան որպես «տէր»՝ սյուզերեն)։ Նույն «գավառի» նոր կառավարիչ Ցլիկ Ամրամը 922 թ. նույնպես ըմբոստանում է Աշոտի դեմ. նա «լքեալ խոտեալ անարգեալ զբնիկ տէրութիւն իւր՝ հաճէր հաւանիր մտանել ընդ լծով ծառայութեան անբնիկն Գուրգենայ, որ էր իշխան իշխանաց Դամրաց աշխարհին»67։ Այս հաղորդումներից պարզ երևում է, որ «տէրութիւնը» կապված էր «ծառայության» հետ։

---

60 «Շավիղ տէրութեան իւրոյ» (Սմբատ I-ի), որը ձգվում էր Կարինից մինչև Տուս ու Նամ. քոր և Կովկասի լեռները և որը որոշ հարկ էր վճարում խալիֆայությանը («ընդ լծով արքունի սակից և բեկարաց». Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 161. Հմմտ. նաև էջ 181)։

61 Նույն տեղում, էջ 205։

62 Նույն տեղում, էջ 173։ Հմմտ. Թովմա Արծրունի, էջ 236։

63 Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 179, 205։ Արքունի տուն՝ տվյալ դեպքում Սմբատ I-ի գլխավորած ֆեոդալական տունն է, որը սովորաբար անվանում են Շիրակի տուն։ IX—X դդ., մինչև Աշոտ III-ի շրջանը, Շիրակի տուն հասկացություն չկար, Սմբատ սպարապետի հիմնած տունը 885 թ. հետո համարվում էր «արքունի տուն», որը հիշատակում է Դրասխանակերտցին, այն գլխավորում էին Աշոտ I-ը և Սմբատ I-ը, իսկ Աշոտի որդիները համարվում էին «արքունի տան գահերեցներ» (տե՛ս Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 143)։

64 Աշոտ երկաթը արաբներից մաքրել էր «զբոլոր իսկ ամրոցս տէրութեան հօր իւրոյ»։ Աղստևի հովտի ամրոցները և Արշարունիքը համարվում էին Աշոտ II-ի «տէրութեան» ամրոցները կամ «աշխարհը» (տե՛ս Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 243—245, 309, 310)։

65 Սմբատը գալիս է «ի սեպհական կալուածս տէրութեան իւրոյ յերազդաւորս» (Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 218)։ Սակայն այս դեպքում «տէրութիւնը» կարելի է հասկանալ նաև ամբողջ երկրի իմաստով, որովհետև երազգավորը այդ շրջանում միաժամանակ և ամբողջ Հայաստանի մայրաքաղաքն էր։ Բայց մեր կարծիքով, նախընտրելի է առաջին մեկնաբանումը։ «Սեփական տէրութիւն» ասելով՝ պատմիչը սովորաբար նկատի ունի անձնական տիրույթները. օրինակ՝ Աշոտ երկաթը և Աշոտ Շապուհյանը ներավատական պայմարում ավերում էին «սեպհական տէրութիւն աշխարհին իւրեանց» (էջ 299)։

66 Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 303։

67 Նույն տեղում, էջ 320։ Դամիրքի իշխան իշխանաց Գուրգենը բյուզանդական հայտնի զորավար Հովհաննես Կուրկուասն է, որը 920—922 թթ. հարձակվել էր Դվինի վրա և միաժամանակ որոշ հայ ֆեոդալների գրգռել Աշոտ II-ի դեմ (տե՛ս Ա. Տեր-Ղևոնդյան. Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում. Երևան, 1965, էջ 137)։

Պատմելով Սմբատ I-ի դեմ կազմակերպված խռովություններից մեկի մասին. Դրասխանակերտցին գրում է, որ թագավորին օգնության էին եկել նրան հավատարիմ իշխանները։ «Իսկ իբրև գուժ աղմկի աղաղակին ընդ ոլորտս տէրութեանն արքայի սփռէր, ամենայն պատերազմող մարտիկ զօրք անցեալ ի հանդիսի... զմի զինուորութիւն զինուորէին, և զմի զրահ ճշմարտութեան ագանէին... և զմահս իւրեանց իբրև զանշուշտ կեանս ի վերայ վրէժխնդրութեան թագաւորին համարէին»[68]։ Այս հաղորդման մեջ «ոլորտ տէրութեան արքայի» նշանակում է պետության այն մասերը, որտեղ ընդունում էին Սմբատի սյուզերենության («տէրութեան») իրավունքը։

«Տէրութեան» մասին Դրասխանակերտցու մոտ տեղեկություններ կան նաև Աշոտ II-ի շրջանից, նույնպես տարբեր իմաստներով։ Վկայված է Աշոտի «տէրութիւնը» ամբողջ Հայաստանում։ Դահակալական պայքարում հաղթելով Գագիկ Արծրունուն և Աշոտ Շապուհյանին, նա ստիպեց հայ ֆեոդալների մեծ մասին, ինչպես նաև Բյուզանդական կայսրությանն ու խալիֆային, ճանաչել իրեն Հայոց թագավոր։ 922 թ. կայսր Կոստանդին Ծիրանածնի հրավերով նա մեկնեց Կ. Պոլիս, որտեղ նրան ընդունեցին մեծ պատիվներով և ճանաչեցին նրա թագավորական իրավունքները։ Որոշ ժամանակ Բյուզանդիայի մայրաքաղաքում մնալուց հետո Աշոտը «խնդրէ հրաժեշտ դառնալոյ անդրէն ի հայրենի տէրութիւնն»[69]։ Հայաստանում Բագրատունյաց «տէրութեան» իշխաններից շատերը, ինչպես նաև Սյունյաց ֆեոդալները (բացառությամբ Վասպուրականի) ճանաչեցին նրա սյուզերենությունը։ Այդ մասին պատմիչը գրում է, որ Կ. Պոլսից վերադառնալուց հետո «զբազումս նուաճեալ ի հնազանդութիւն ինքեան կացուցանէր և ի բազմաց նորընծայ իմն հիւրամեծարութեան ակն կալեալ սպասէր»[70]։ Աշոտին ներկայացան Սյունյաց գահակալ Սմբատը և Սյունիքի գահակալները (Գեղարքունիքի ճյուղից Վասակն ու Սահակը)[71]։ Դու նշանակում է, որ Սյունիքի իշխանները Աշոտ II-ին ճանաչեցին պետության ղեկավար, իսկ Սյունիքը մնաց վերջինի գլխավորած «հայրենի տէրութեան» կազմում։

* * *

Այսպիսով, սույն շարադրանքից երևաց, որ IX—X դարի առաջին երեսնամյակում Հայաստանում գոյություն ունեին երեք «տէրութիւններ»՝ Վասպուրականի, Սյունյաց և Բագրատունյաց։

Բնական հարց է առաջ գալիս՝ արդյոք նշված երեք «տէրութիւնները» կապվա՞ծ էին միմյանց հետ և եթե այո՝ ի՞նչ եղանակով։

Աղբյուրների (առաջին հերթին երեք տոհմական պատմիչների) վկայությունները մատնացույց են անում, որ մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում Վասպուրականի ու Սյունիքի գահակալ կամ մեծ իշխանները (առաջինները կարճատև ընդմիջումով) ընդունում էին Բագրատունի գահերեցների սյուզերենությունը, նրանց միջև հաստատված էին հարաբերություններ վասալիտետի սկզբունքով՝ փոխադարձ ծառայություն և հովանավորություն։

Հովհաննես Դրասխանակերտցին գրում է, որ 862 թ., երբ Աշոտ Բագրատունին դարձավ իշխանաց իշխան, բոլոր իշխանները «դաշինս ընդ նմա դնէին», իսկ նրա եղբայր սպարապետը՝ Աբասը, շատերին հնազանդեցրեց Աշոտին «ընդ լծով ծառայութեան»[72]։ Նա նկատի ունի Վասպուրականի և Սյունիքի գահերեցներին, որոնք ճանաչում էին Աշոտին որպես սյուզերեն

---

68 Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 207, 208։

69 Նույն տեղում, էջ 292։

70 Նույն տեղում, էջ 293։

71 Նույն տեղում, էջ 294։ Ստ. Օրբելյան, էջ 193։ «Տէրութեան» օգտագործումը մյուս իմաստներով (Բագրատունյաց ոստանի կամ սեփական տիրույթների) տե՛ս ծան. 64, 65։

72 Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 133, 135։

(«հայր») և ընդունում նրա հավանավորությունը («խնամքը»)[73]. Բագրատունիների հետ առանձնապես սերտ հարաբերություններ ունեին Սյունիքի իշխանները[74]։

908 թ. մահացավ Սյունյաց գահերեց Աշոտը, նրա որդի Սմբատին գահերեց իշխան «կացուցանեց» Սմբատ I Բագրատունին, որը այդ նպատակով եկել էր Սյունիք, իսկ Սյունյաց Սմբատը ենթարկվեց Հայոց թագավորին որպես «որդի սիրելի»[75]։

Այսպիսով, Վասպուրականի և Սյունիքի «տէրութիւնները», իրենց «գահագլուխ և տէր»-ի վասալական կապերի միջոցով կապված էին Բագրատունյաց «տէր»-ի հետ։ Այդ իրողությունն է հաստատում Թովմա Արծրունու այն տեղեկությունը (էջ 207), որ Արաբիայից վերադարձած հայ իշխանները «հնազանդեալք ընդ պետութեամբ իշխանաց իշխանի»։ Եթե այդ փաստը համադրենք Դրասխանակերտցու վերոհիշյալ վկայության հետ, ապա պարզ է դառնում, որ Աշոտի «պետութիւնը» տարածվում էր այն իշխանների վրա, որոնք «դաշինքով» և «լծով ծառայութեան» կապված էին Աշոտ Բագրատունու հետ։

Նույն պատմիչների այլ տեղեկությունների համադրումը ցույց է տալիս, որ Սմբատ I Բագրատունին նույնպես ուներ իր «պետութիւնը», որը գործում էր իր ամբողջ «տէրութեան» մեջ։ Այսպես, ըստ Դրասխանակերտցու Սմբատը ցանկանում էր վերադարձնել և միացնել Տարոնը իր «բնիկ տէրութեան»-ը, իսկ Թովման գրում է, որ Ահմադ ամիրան Տարոնը «հանեալ ի Հայոց պետութենէ»[76]։ Այլ տեղ նա հաղորդում է, որ Ապահունիքի կայսիկ ամիրա Արդոահմանի որդիները «ապստամբեալ էին ի պետութենէ թագաւորին, տալ հարկս և զինուորել որպէս օրէն էր»[77]։ Բերված օրինակներում «Հայոց պետութիւնը» վերաբերում է Սմբատի «տէրութեանը», ուստի վերջինը, փաստորեն, համազոր է Հայոց (համահայկական) «տէրութեանը»։

Վերը ասվեց իշխանաց իշխան Աշոտի «պետութեան» մասին. այդպիսին նա ուներ նաև իր թագավորության տարիներին։ Պատմագիր Ասողիկը նրա վերաբերյալ գրում է. «Եւ բազում անգամ զիշխանութիւն պետութեանս Հայոց առեալ»[78]։ «Բազում անգամ»-ը մեր կարծիքով վերաբերում է 862-ից մինչև 890 թ. ընկած ժամանակաշրջանին, երբ Աշոտը վարչական իրավունքներ ուներ ամբողջ Հայաստանում։ Ուրեմն Աշոտ I-ը և Սմբատ I-ը ունեին թագավորական «պետութիւն», ինչպես գահագլուխ իշխաններն ունեին «իշխանական պետութիւն» (իսկ 862—885 թթ. Աշոտ Բագրատունին՝ իշխանաց իշխանի «պետութիւն»)։ Այն տարածվում էր հայ իշխանությունների՝ Վասպուրականի և Սյունիքի, կայսիկների ամիրայության և մյուսների վրա, որոնք վասալիտետով ենթարկվում էին Բագրատունիներին։

---

73 Դերենիկ Արծրունին ընդունում էր Աշոտի «հայրական» իրավունքը, նրա հաջորդ Աշոտ Արծրունին Սմբատ I-ի հետ ուներ «դաշինք ուխտի» (տե՛ս նույն տեղում, էջ 135, 136, 171)։ Ավելի վաղ Դերենիկի հայր Աշոտը Բագարատ Բագրատունու հետ նույնպես կապված էր «ուխտով»։ Բագարատը ուներ «զգլխավորութիւն բարձակցութիւն իշխանաց Հայոց» (տե՛ս Թովմա Արծրունի, էջ 107, 109)։

74 Սյունյաց «մեծ նահապետ» Սահակը «միաբան և միախորհուրդ» էր Սմբատ սպարապետի հետ (տե՛ս Ստ. Օրբելյան, էջ 166), Վայոց Ձորի և Գեղարքունիքի իշխաններ Վասակ Իշխանիկը և Վասակ Գաբուրը Աշոտ իշխանաց իշխանի վասալներն էին, վերջինս Գարուրին «կացուցանեց» գահերեց իշխան (տե՛ս Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 135, 136)։

75 Ստ. Օրբելյան, էջ 184, 185։ Ատրպատականի ամիրա Ավշինը, ցանկանալով խախտել հայ իշխանների միաբանությունը, փորձում էր Սյունյաց գահերեցին վասալիտետով կապել իր հետ։ Սմբատը թեև ներկայացավ Ավշինին, բայց չկազմեց «միաբանութիւնը» Հայոց թագավորի հետ և խնդրեց նրան չմերժել «խնամոցն հայրական սիրոյն» (տե՛ս Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 172)։

76 Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 173։ Թովմա Արծրունի, էջ 236։

77 Թովմա Արծրունի, էջ 245։

78 Ասողիկ, էջ 158։

«Տէրութեան» շուրջ կատարած մեր քննությունը ցույց է տալիս, որ այն ներկայացնում էր ֆեոդալների վարչաքաղաքական կառամակերպություն։ «Տէրութիւնը» նույն իշխանությունն էր ամ թագավորությունը՝ դիտված վասալասյուզերենական կապերի տեսանկյունից։ IX դարում—X դարի սկզբին Հայաստանում կային երեք այդպիսի «տէրութիւններ», որոնք IX դարի վերջում (պահպանելով ներքին ինքնուրույնությունը) միասին կազմեցին Հայոց թագավորությունը բագրատունյաց «տէրի» գլխավորությամբ։ Վերջինս մյուսների համար Հայոց թագավոր էր ս «առաջին հավասարների մեջ»։

Նշված «տէրութիւնները» Հայաստանում կային նաև Հայոց թագավորության հաջորդ, մասնատվածության շրջանում (X դարի կեսեր—1045 թ.), որոնց դերը երկրի ներքաղաքական կյանքում պահանջում է առանձին ուսումնասիրություն։

ТЕРМИН ТЕРУТЮН КАК ОТРАЖЕНИЕ СИСТЕМЫ ВАССАЛЬНО-СЮЗЕРЕННЫХ ОТНОШЕНИЙ

(IX—первая треть X вв.)

Р. И. МАТЕВОСЯН

(Резюме)

Термин *терутюн,* распространенный во внутриполитической и социально-экономической жизни Армении IX—XI вв., имеет несколько значений. Этим термином источники X—XIII вв. обозначают наследственные уделы крупных феодалов, государства (Арабский халифат, Византийскую империю, Армению и др.). Анализ письменных источников показывает, что *терутюн* означал также систему вассально-сюзеренных отношений, вассалитет как политический институт. *Терутюн* формировался через взаимные военно-политические связи феодалов (*ухты* — договоры о службе и покровительстве) с их сюзеренами—удельными князьями (*терами* армянских источников). В IX—XI вв. в Армении существовало три крупных *терутюна*—в Васпуракане, Сюнике и Багратидском домене, возглавлявшихся своими *терами.* Первые два через вассалитет были связаны с Багратидским *тером,* которого они признавали верховным сюзереном—«первым среди равных». В конце IX в. (885 г.) путем объединения названных *терутюнов* в единое Армянское царство была восстановлена армянская государственность; Багратидский *тер* стал царем Армении. В дальнейшем, с появлением удельных царств, государственное устройство Армянского царства претерпело изменения.